

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
Գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » \_\_\_\_\_ 12 \_\_\_\_\_ 2017 թ.  
(արձանագրություն թիվ \_\_\_\_\_ 5 \_\_\_\_\_ )

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով ՀԱԱՀ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի «ՀԱԱՀ 3 տարիների՝ 2014-2016 թթ. բակալավրի աստիճանի շրջանավարտների շրջանում անցկացված աշխատանքի տեղավորման և սոցիոլոգիական հետազոտության վերլուծության» արդյունքները (զեկուցող Լ. Մնացականյան), նշում է, որ «Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների զբաղվածությունական ուղղված բարձրագույն կրթության ցանց»-ի գործարկման և օգտագործման աշխատանքում կան շոշափելի ձեռքբերումներ. սկսած 2014 թ. ցանցում գրանցվել են և իրենց պրոֆիլներն են ստեղծել ՀԱԱՀ 2014-17 թթ. 3200 շրջանավարտ , ինչը հնարավորություն է տալիս ՀԱԱՀ ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու ուղղությամբ համալսարանում տարվող աշխատանքերը բարելավել, ինչպես նաև համալսարանի շրջանավարտների զբաղվածության մակարդակի մշտադիտարկում իրականացնել: Այս ամենի հետ միասին վերոնշյալ ցանցի արդյունավետ աշխատանքը մեծապես կապված է նաև ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների ղեկանատների, մագիստրատուրայի, ասպիրատուրայի բաժինների, հեռակա ուսուցման ղեկարտամենտի և Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի միջև երկկողմանի տեղեկատվական անբակտելի հոսքի առկայությունից: HEN-GEAR տվյալների բազա մուտքագրված շրջանավարտների տվյալների խաչաձև ստուգման և համալսարանի կողմից հավաստիության ապահովման համար անհրաժեշտ է ամենամյա պարբերականությամբ վերոնշյալ ստորաբաժանումներում իրականացնել շրջանավարտների վարչական տվյալների մուտքագրում: